# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«04» դեկտեմբերի 2023 թվականի N 3050 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 101,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ 192,82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԼՅՈՒԴՎԻԳԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հ,Սարգսյան փողոցի հարևանությամբ քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանի կողմից մինչև 2001 թվ մայիսի 15-ը կառուցվել է բնակելի տուն,որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանը

Քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մարմիններ>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հիմք ընդունելով քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 02-ին N 8110 թվագրմամբ )՝կադաստրի կոմիտեում հաշվառված է 2023 785F4K ծածկագրով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Վարուժան Լյուդվիգի Մաթևոսյանի (ծնված 15.03. 1956թ.), սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հ,Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 192,82(մեկ հարյուր իննսուներկու ամբողջ ութսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 101,58 ( մեկ հարյուր մեկ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

04.12.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«04» դեկտեմբերի 2023 թվականի N 3049Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍ ՓՈՂՈՑ N 6 ՏԱՆԸ ԿԻՑ 186,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 46,88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ( 36,97 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Նար-Դոս փողոց N 6 տանը կից 186,58 (մեկ հարյուր ութսունվեց ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված են 46,88 (քառասունվեց ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 36.97 (երեսունվեց ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ և պարիսպ, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Կարինե, Մուրադ և Արտյոմ Հարությունյանները:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, ղեկավարվերով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է՝ 2023RJXRVJծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Նար-Դոս փողոց N 6 տանը կից 186,58 (մեկ հարյուր ութսունվեց ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 46,88 (քառասունվեց ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 36.97 (երեսունվեց ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը և պարիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցները իրականացրած քաղաքացիների՝ Կարինե, Մուրադ և Արտյոմ Հարությունյաններին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«04» դեկտեմբերի 2023 թվականի N 3048-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N185/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 21,73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N185/3 հասցեի հողամասում 2001թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է գազալցակայան:

Քաղաքացի Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մարմիններ>> հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 15.08.2022թ. N14355թվագրությամբ),կադաստրի կոմիտեում հաշվառված է 2022SGXKJS ծածկագրով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N185/3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 21,7( քսանմեկ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական: Տեղական բյուջե ենթակա է գանձման 72709( յոթանասուներկու հազար յոթ հարյուր ինը ) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

04.12.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3047-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԻՆԵԼ ԳՐԻՇԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ), ՆՈՒՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ), ԿԱՐԱՊԵՏ ԱԼԲԵՐՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ) ԵՎ ԱԼԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ (3/6 ՄԱՍ) ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵԾ ԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍ № 92/11 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 65.78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մեծ Բերդ թաղամաս № 92/11 հասցեով բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացիներ Նինել Գրիշայի Գեվորգյանին (1/6 Մաս), Նունե Ալբերտի Մկրտչյանին (1/6 մաս), Կարապետ Ալբերտի Մկրտչյանին (1/6 մաս) և Ալբերտ Կարապետի Մկրտչյանին (3/6 մաս) (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 17-ի № 1556-Ա որոշում):

Քաղաքացի Նինել Գրիշայի Գեվորգյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված բնակելի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 65.78 (վաթսունհինգ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 231-Ա որոշումը և քաղաքացի Նինել Գրիշայի Գեվորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 13-ին № 12025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Նինել Գրիշայի Գեվորգյանին (1/6 Մաս), Նունե Ալբերտի Մկրտչյանին (1/6 մաս), Կարապետ Ալբերտի Մկրտչյանին (1/6 մաս) և Ալբերտ Կարապետի Մկրտչյանին (3/6 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես սեփականություն իրենց նվիրատրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մեծ Բերդ թաղամաս № 92/11 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 65.78 (վաթսունհինգ ամբողջ յոթանասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով Գյումրի համայնքին պատկանող հողամասը որպես սեփականություն՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 292195 (երկու հարյուր իննսուներկու հազար մեկ հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Հողի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Նինել Գրիշայի Գեվորգյանի, Նունե Ալբերտի Մկրտչյանի, Կարապետ Ալբերտի Մկրտչյանի և Ալբերտ Կարապետի Մկրտչյանի միջոցների հաշվին:

5. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի քաղաքապետի 2014թվականի հուլիսի 30-ի «Քաղաքացիներ Վարդ Կարապետի, Կարապետ Մնացականի, Արթուր Կարապետի, Նինել Գրիշայի, Նունե Ալբերտի, Կարապետ Ալբերտի Մկրտչյաններին սեփականության իրավունքով նվիրատրված Մեծ Բերդ Դոս № 90/2 հասցեով բնակելի ֆոնդի տան զբաղեցրած 65,78 քառ.մ մակերեսով համայնքապատկան հողամասը վարձակալության տրամադրելու մասին» թիվ 1634-Ա որոշումը:
6. Լուծել հողամասի վարձակալության պայմանագիրը՝ 2014 թվականի օգոստոսի 22-ի, սեղանամատյան № 3256:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N30052023-08-0014 վկայականը չեղարկելու համար:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Նինել Գրիշայի Գեվորգյանին, Նունե Ալբերտի Մկրտչյանին, Կարապետ Ալբերտի Մկրտչյանին և Ալբերտ Կարապետի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

04.12.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«04» դեկտեմբերի 2023 թվականի N3046-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԵՐՅՈԺԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԷԼՈՅԱՆԻՆ50%,ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԱՏՈՒՐԻ ԷԼՈՅԱՆԻՆ16,67%, ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԻ ԷԼՈՅԱՆԻՆ 16,67% ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԱՍԱՏՈՒՐԻ ԷԼՈՅԱՆԻՆ 16,66% ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ N 218 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 2,55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Սերյոժա,Վլադիմիր,Վահրամ և Լուսրնե Էլոյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N 218 հասցեի տան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 2,55 (երկու ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական )քառ.մետր արտաքին մակերեսով բնակելի և ինքնակամ բացված է 2 երկու դուռ :

Քաղաքացի Վահրամ Էլոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. կետի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Էլոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 28.06.2023թ. N 13538 թվագրությամբ) կադաստրի կոմիտեում հաշվառված է 2023XBJ94Z ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Սերյոժա Վոլոդյայի Էլոյանին 50%,Վլադիմիր Ասատուրի Էլոյանին16,67%,Վահրամ Ասատուրի Էլոյանին 16,67% և Լուսինե Ասատուրի էլոյանին 16,66% ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N 218 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 2,55 (երկու ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառ.մետր արտաքին մակերեսով բնակելին և ինքնակամ բացված 2(երկու) դուռը ճանաչել օրինական:Տեղական բյուջե ենթակա է գանձման 14587 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Էլոյաններին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

04.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.